ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԾՁԲ-2019/11-ԵՊԲՀ-1»

ք.Երևան « » « » 2019թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամը ի դեմս ռեկտոր Ա.Մուրադյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և անհատ ձեռներեց Սերգեյ Հայրապետյանը, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նկարահանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6.000.000,00 (վեց միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական	ԱՁ Սերգեյ Հայրապետյան
բժշկական համալսարան Հիմնադրամ	Հասցե՝ ք.Գյումրի, Ջիվանու 15
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2	Հեռախոսահամար՝ 093 28 80 88
Հեռախոսահամար՝ 060 621 000	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Հ/հ՝ 2050132031091001
Հ/հ՝ 11500166513800	ՀՎՀՀ՝ 57278776
ՀՎՀՀ՝ 01503448	էլ. հասցեն՝ sergeyshhayrapetyan@gmail.com
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան	ԱՁ Ս.Հայրապետյան

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.07.25 12:21:31 AMST

HAYRAPETYAN SERGEY 1702850110
Подписано цифровой подписью: HAYRAPETYAN SERGEY 1702850110
Дата: 2019.07.24 18:28:33 +05'00'

_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2019/11-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
9	92121110	Նայել կից Հավելվածում:	դրամ	6.000.000,00	1	ծառայությունը մատուցվելու է Պատվիրատուի նշած հացեով	Կատարողին պահանջ ներկայացնելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ				**6.000.000,00**			

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.07.25 14:11:14 AMST

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ԱՁ Սերգեյ Հայրապետյան
Հասցե՝ ք.Գյումրի, Ջիվանու 15
Հեռախոսահամար՝ 093 28 80 88
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/հ՝ 2050132031091001
ՀՎՀՀ՝ 57278776
Էլ. հասցեն՝ sergeyshhayrapetyan@gmail.com
ԱՁ Ս.Հայրապետյան

HAYRAPETYAN SERGEY 1702850110
Подписано цифровой подписью: HAYRAPETYAN SERGEY 1702850110
Дата: 2019.07.24 18:29:03 +05'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված

Անհրաժեշտ տեսանյութերի պատրաստում.

- Տեսադասախեսություններ ԳլՕԲ-Ուս (Գերլարված Օրակարգով Բժշկական Ուսուցում)(թվով 80 հատ, տևողությունը՝ 0,5-1,5 ժամ)
- Ակնարկային տեսադասախոսություններ (100 վայրկյան կարևորի մասին) (թվով 1000 հատ, տևողությունը՝ 0,5-1,5 րոպե)
- Տեսաֆիլմ Համալսարանի վերաբերյալ (1 հատ, տևողությունը՝ 5-15 րոպե)
- Դասախոսական անձնակազմի ծանրաբեռնվածությամբ պայմանավորված մարդկային ռեսուրսների սղությունից ելնելով, ինչպես նաև տեսանյութի կոմերցիոն ազդեցության սեզոնային անհրաժեշտությամբ պայմանավորված բոլոր տեսանյութերը խմբավորված են, որպես մեկ ամբողջական ծառայություն:

- **Անվանում՝ ԳլՕԲ-Ուս**

Տեսադասախոսություն է, որում շոշափվում են բժշկագիտական թեմաներ տարբեր բազային առարկաներից: Դասախոսությունը սկսվում է ԵՊԲՀ Կարիերայի կենտրոնի տարբերանշանի անիմացիոն առաջնադրով և ավարտվում ԵՊԲՀ տարբերանշանի անիմացիոն վերջնադրով: Տեսադասախոսության ընթացքում դասախոսը կադրում երևում է երկու տարբեր դիրքերով (խոշոր և ընդհանուր): Դասախոսության թեմայի անվանումը, ինչպես նաև դասախոսի անունը պարբերաբար անիմացիոն տողով երևում են էկրանի ստորին հատվածում, իսկ դասախոսության ողջ ընթացքում էկրանին ֆիքսված են ԵՊԲՀ Կարիերայի կենտրոնի և ԵՊԲՀ տարբերանշանները: Դասախոսության ընթացքում դասախոսը աշխատում է համակարգչով, ցուցադրելով թեմային վերաբերվող ներկայացումը: Համակարգչի էկրանի վրա կատարվողի տեսակադրը օգտագործվում է տեսադասախոսությունում՝ լրացնելով մատուցվող տեղեկատվությունը: Տեսադասախոսությունները նկարահանվում են նախապես պայմանավորված 5 տարբեր վայրերում, օրվա մութ ժամերին: Տեսադասախոսության կադրը համալրված պետք է լինի դեկորատիվ լուսավորությամբ: Տեսադասախոսության բովանդակային մասը և գունապատկերները տրամադրվելու են ԵՊԲՀ Կարիերայի կենտրոնի կողմից ներկայացված դասախոսների կողմից՝ համապատասխան կատարողի կողմից ներկայացված խմբագրական չափանիշների: Տեսաձայնագրության տրամադրման ֆորմատը՝ Full HD 1080p, MP4, կրիչը՝ արտաքին կոշտ սկավառակ:

- Նվազագույն տեխնիկական ապահովում

Տեսանկարահանման լիարժեք, ժամանակին և որակյալ ապահովման համար ցանկալի է նկարահանումների ժամանակ օգտագործել առնվազն 2 տեսախցիկներ, որոնք կհամապատասխանեն առնվազն Full HD 1080p որակին՝ ապահովելու համար տեսանյութի անհրաժեշտ որակը: Պայմանանավորված օրվա մութ ժամերին նկարահանումներով, դրանց ցանկալի նվազագույն լուսազգայնությունը 0,16 Լյուքս, ինչպես նաև մատրիցայի ցանկալի նվազագույն չափը 1,9 մեգապիքսել լինելու դեպքում, ինչպես նաև կիրառվող օբյեկտիվների ֆոկուսային հեռավորությունը ցանկալի կլինի, որ գտնվի 16-200 մմ միջակայքում: Տեսախցիկների համար կիրառվող կացոցների ցանկալի բարձրությունը 05-1,5 մ միջակայքն է, ինչը ազդելու է նկարահանման պլանի արդյունավետ ընտրության և տեղադրման համար: Ցանկալի կլինի, որ կացոցների քանակը համապատասխանի տեսախցիկների քանակին: Պայմնավորված օրվա մութ ժամերի նկարահանումներով և նկարահանման հարթակի դեկորատիվ լուսային ձևավորմամբ, ենթադրվում է, որ անհրաժեշտություն կլինի 3-10 LED PAR RGB տիպի դեկորատիվ լույսերի, որոնք համալրելու համար կադրի լուսային ձևավորումը, ցանկալի է, որ ունենան առնվազն 40° լուսասփռման անկյուն և համալրված լինեն ինքնուրույն և կախովի կանգնակներով՝ տեխնիկական և մոնտաժային դժվարություններից խուսափելու համար: Կադրում խոսող անձանց պատշաճ լուսավորության համար ցանկալի է կիրառել 3000-6500 Կելվին (փոփոխման հնարավորությամբ) լույսի ջերմաստիճանով և սեփական կանգնակներով լույսեր: Ցանկալի է, որ այս լույսերի քանակը լինի 2-ից ոչ պակաս՝ պայմանավորված պատշաճ լուսային էֆեկտի ապահովման ցանկությամբ: Նկարահանումների ժամանակ ձայնի լիարժեք ձայնագրման նպատակով ցանկալի է կիրառել հեռահար Bodypack system խոսափող-կադրում այդ տեխնիկական միջոցի առավել աննկատ առկայությունն ապահովելու նպատակով: Տեսադասախոսության ընթացքում խոսողի համակարգչով աշխատելու և էկրանի բովանդակության ձայնագրման անհրաժեշտությամբ պահմանավորված, ցանկալի է, որ այդ համակարգիչը ունենա համապատասխան ծրագրային ապահովում և SDI Input հնարավորություն, իսկ մոնտաժային համակարգիչները ցանկալի են լինեն թվով 2, հնարավորինս արագ և արդյունավետ աշխատանքի, պատրաստի արտադրանքի հանձնման ժամանակահատվածի առավել սեղմ

միջակայք ապահովելու նպատակով օժտված լինեն CPU՝ ցանկալի է առնվազն՝ Core i5, RAM՝ ցանկալի է առնվազն 16 GB, GPU՝ ցանկալի է առնվազն և GTX 670 ցանկալի հզորություններով: Նկարահանման գործընթացի անխափան և անընդհատ անցկացման նպատակով անհրաժեշտ է, որ առկա լինեն տեսանկարահանման, հոսանքի և ձայնային անհրաժեշտ մալուխներ և տեխնիկայի սնուցման մարտկոցներ՝ նվազագույն տեխնիկական աջակցություն:

- Նկարահանում

Առավել արդյունավետ կազմակերպելու համար նկարահանումները և ցանկալի վերջնարդյունքին հասնելու համար, ցանկալի է, որ նկարահանումային օրերի քանակը կազմի շուրջ 20, յուրաքանչյուր նկարահանումային օրվա տևողությունը կազմի շուրջ 8 ժամ, իսկ մոնտաժային ժամերը՝ 300 ժամ: Նյութը դինամիկ և դիտվող դարձնելու նպատակով, ցանկալի է օգտագործվող անիմացիաների գումարային տևողություն տեսադասախոսության ընթացքում կազմի շուրջ 20 վայրկյան: Տեխնիկական անձնակազմի տեսանկյունից, ցանկալի է ներգրավել 2 օպերատոր, ասիստենտ, համակարգչային օպերատոր, ռեժիսոր, մոնտաժող և այլ համապատասխան մասնագետների:

- **Անվանում՝ 100 վայրկյան կարևորի մասին**

Ակնարիկային տեսադասախոսություն է, որում շոշափվում են բժշկագիտական, հանրային առողջապահական թեմաներ: Դասախոսությունը սկսվում է ԵՊԲՀ Կարիերայի կենտրոնի տարբերանշանի անիմացիոն առաջնադրով և ավարտվում ԵՊԲՀ տարբերանշանի անիմացիոն վերջնադրով: Տեսադասախոսության ընթացքում դասախոսը կադրում երևում է երկու տարբեր դիրքերով (խոշոր / ուղիղ և խոշոր / կողքից / մոնտաժային էֆֆեկտով): Դասախոսության թեմայի անվանումը, ինչպես նաև դասախոսի անունը պարբերաբար անիմացիոն տողով երևում են էկրանի ստորին հատվածում: Կադրում, ըստ անհրաժեշտության հայտնվում են թեմային վերաբերող առանցքային բառեր, արտահայտություններ, գրաֆիկական պատկերներ, նկարներ(որոնց վրա, ըստ անհրաժեշտության կատարվելու են ընդգծումներ՝ անիմացիայի միջոցով), աղյուսակներ: Դասախոսության ընթացքում դասախոսը կանգնած է թեմատիկ կամ նեյտրալ վայրում, որը բնորոշում է տվյալ թեման: Տեսադասախոսությունները նկարահանվում են նախապես պայմանավորված տարբեր վայրերում (բացօթյա և/կամ շենքային պայմաններում), օրվա լույս և/կամ մութ ժամերին: Տեսադասախոսության կադրը, ըստ անհրաժեշտության, պետք է համալրված լինի դեկորատիվ լուսավորությամբ: Տեսադասախոսության բովանդակային մասը և կադրում տեղադրվելիք առանցքային բովանդակությունը տրամադրվելու են ԵՊԲՀ Կարիերայի կենտրոնի կողմից ներկայացված դասախոսների կողմից՝ համապատասխան կատարողի կողմից ներկայացված խմբագրական չափանիշների: Տեսաձայնագրության տրամադրման ֆորմատը՝ Full HD 1080p, MP4, կրիչը՝ արտաքին կոշտ սկավառակ:

- Նվազագույն տեխնիկական ապահովում

Տեսանկարահանման լիարժեք, ժամանակին և որակյալ ապահովման համար ցանկալի է նկարահանումների ժամանակ օգտագործել առնվազն 2 տեսախցիկներ, որոնք կհամապատասխանեն առնվազն Full HD 1080p որակին՝ ապահովելու համար տեսանյութի անհրաժեշտ որակը: Պայմանանավորված դրանց ցանկալի նվազագույն լուսազգայնությունը 0,16 Լյուքս, ինչպես նաև մատրիցայի ցանկալի նվազագույն չափը 1,9 մեգապիքսել լինելու դեպքում, ինչպես նաև կիրառվող օբյեկտիվների ֆոկուսային հեռավորությունը ցանկալի կլինի, որ գտնվի 16-200 մմ միջակայքում: Տեսախցիկնի համար կիրառվող կացոցի և միոտնակի ցանկալի բարձրությունը 05-1,5 մ միջակայքն է, ինչը ազդելու է նկարահանման պլանի արդյունավետ ընտրության և տեղադրման համար: Ցանկալի կլինի, որ կացոցների քանակը համապատասխանի տեսախցիկների քանակին: Պայմնավորված նկարահանման հարթակի դեկորատիվ լուսային ձևավորմամբ, ենթադրվում է, որ անհրաժեշտություն կլինի 2-7 LED PAR RGB տիպի դեկորատիվ լույսերի, որոնք համալրելու համար կադրի լուսային ձևավորումը, ցանկալի է, որ ունենան առնվազն 40° լուսասփռման անկյուն և համալրված լինեն ինքնուրույն և կախովի կանգնակներով՝ տեխնիկական և մոնտաժային դժվարություններից խուսափելու համար: Կադրում խոսող անձանց պատշաճ լուսավորության համար ցանկալի է կիրառել 3000-6500 Կելվին (փոփոխման հնարավորությամբ) լույսի ջերմաստիճանով և սեփական կանգնակներով լույսեր: Ցանկալի է, որ այս լույսերի քանակը լինի 2-ից ոչ պակաս՝ պայմանավորված պատշաճ լուսային էֆեկտի ապահովման ցանկությամբ: Նկարահանումների ժամանակ ձայնի լիարժեք ձայնագրման նպատակով ցանկալի է կիրառել հեռահար Bodypack

system խոսափող-կադրում այդ տեխնիկական միջոցի առավել աննկատ առկայությունն ապահովելու նպատակով: Մոնտաժային համակարգիչները ցանկալի են լինեն թվով 2, հնարավորինս արագ և արդյունավետ աշխատանքի, պատրաստի արտադրանքի հանձնման ժամանակահատվածի առավել սեղմ միջակայք ապահովելու նպատակով օժտված լինեն CPU՝ ցանկալի է առնվազն՝ Core i5, RAM՝ ցանկալի է առնվազն 16 GB, GPU՝ ցանկալի է առնվազն և GTX 670 ցանկալի հզորություններով: Նկարահանման գործընթացի անխափան և անընդհատ անցկացման նպատակով անհրաժեշտ է, որ առկա լինեն տեսանկարահանման, հոսանքի և ձայնային անհրաժեշտ մալուխներ և տեխնիկայի սնուցման մարտկոցներ՝ նվազագույն տեխնիկական ապահովում:

- Նկարահանում

Առավել արդյունավետ կազմակերպելու համար նկարահանումները և ցանկալի վերջնարդյունքին հասնելու համար, ցանկալի է, որ նկարահանումային օրերի քանակը կազմի շուրջ 20, յուրաքանչյուր նկարահանումային օրվա տևողությունը կազմի շուրջ 8 ժամ, իսկ մոնտաժային ժամերը՝ 300 ժամ: Նյութը դինամիկ և դիտվող դարձնելու նպատակով, ցանկալի է օգտագործվող անիմացիաների գումարային տևողություն տեսադասախոսության ընթացքում կազմի շուրջ 20 վայրկյան: Տեխնիկական անձնակազմի տեսանկյունից, ցանկալի է ներգրավել 2 օպերատոր, ասիստենտ, համակարգչային օպերատոր, ռեժիսոր, մոնտաժող և այլ համապատասխան մասնագետների:

- **Անվանում՝ Տեսաֆիլմ Համալսարանի վերաբերյալ**

Տեսաֆիլմում արծարծվում են Հայաստանում բժշկագիտության հիմնադրման վերաբերյալ տեղեկատվություն, անվանի բժիշկների ուղիղ խոսք բժշկական Համալսարանի վերաբերյալ, Համալսարանի հզորությունների վերաբերյալ տեղեկատվություն, Համալսարանի նվաճումների վերաբերյալ տեղեկատվություն, Համալսարանի պրոֆեսորադասախոսական և/կամ ադմինիստրատիվ ներկայացուցիչների ուղիղ խոսք, Համալսարանի ուսանողների ուղիղ խոսք: Տեսաֆիլմի մանրամասն սցենարը ներկայացվում է կատարողի կողմից: Տեսաֆիլմը ուղեկցվում է ձայնային և անիմացիոն ձևավորմամբ: Տեսաֆիլմը ներկայացվում է 2 օրինակից՝ բնօրինակ (հայաերենով), ձայնադրմամբ (անգլերեն թարգմանությամբ): Տեսաձայնագրության տրամադրման ֆորմատը՝ Full HD 1080p, Quicktime (MOV), AAC, Կրիչը՝ արտաքին կոշտ սկավառակ:

- Նվաքզագույն տեխնիկական ապահովածություն

Տեսաֆիլմի բարեհաջող նկարահանումների իրականացման նպատակով, ցանկալի որակ և նկարահանման գործընթացի արդյունավետ ընթացք ապահովելու համար ցանկալի կլինի, որ տեսախցիկը հնարավորություն ունենա նկարահանելու 4 K որակով, ցանկալի է, որ նվազագույնը ապահովի 17 մեգապիքսեր ընդարձակում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտ է տարբեր տեսարանների նկարահանումներ, դինամիկ, ստատիկ, հարցազրույցներ, արտաքին նկարահանումներ, ուստի ցանկալի է, որ տեսախցիկը կահավորված լինի մի քանի օբյեկտիվներով, մասնավորապես ցանկալի է, 16-35 մմ, 24-70 մմ, 70-200 մմ, 50 մմ fix: Լավագույ պատկերներ ստանալու համար ցանկալի է կատարել դրոնով նկարահանումներ, իսկ ներկայացվելիք դրոնի տեսախցիկի նկարի որակը ցանկալի է, որ լինի 4 K, իսկ նրա թռիչքային բարձրությունը ցանկալի է լինի 1000մ ծովի մակերևույթից բարձր և ավելին՝ խուսափելու համար նկարահանումների վայրերի սահմանափակելուց՝ պայմանավորված տեխնիկական միջոցների սահմանափակումներով: Ցանկալի կլինի, որ տեսախոցիկը ունենա համապատասխան կացոց, և/կամ միոտնակ որի բարձրությունը ցանկալի է կազմի 0,5-1,5 մ միջակայքում, ցանկալի է, որ տեսախցիկը կահավորված լինի նաև ռոնինով և ցանկալի է 60 սմ երկարությամբ սլայդերով: Պայմնավորված նկարահանման հարթակի դեկորատիվ լուսային ձևավորմամբ, ենթադրվում է, որ անհրաժեշտություն կլինի 3-10 LED PAR RGB տիպի դեկորատիվ լույսերի, որոնք համալրելու համար կադրի լուսային ձևավորումը, ցանկալի է, որ ունենան առնվազն 40° լուսասփռման անկյուն և համալրված լինեն ինքնուրույն և կախովի կանգնակներով՝ տեխնիկական և մոնտաժային դժվարություններից խուսափելու համար: Կադրում խոսող անձանց պատշաճ լուսավորության համար ցանկալի է կիրառել 3000-6500 Կելվին (փոփոխման հնարավորությամբ) լույսի ջերմաստիճանով և սեփական կանգնակներով լույսեր, ինչպես նաև կահավորված տեղաշարժվելի արտացոլիչով: Ցանկալի է, որ այս լույսերի քանակը լինի 2-ից ոչ պակաս՝ պայմանավորված պատշաճ լուսային էֆեկտի ապահովման ցանկությամբ: Նկարահանումների ժամանակ ձայնի լիարժեք ձայնագրման նպատակով ցանկալի է կիրառել հեռահար Bodypack system խոսափող-կադրում այդ տեխնիկական միջոցի առավել աննկատ առկայությունն ապահովելու նպատակով: Մոնտաժային համակարգիչները ցանկալի են լինեն թվով 2, հնարավորինս արագ և արդյունավետ աշխատանքի, պատրաստի արտադրանքի հանձնման

ժամանակահատվածի առավել սեղմ միջակայք ապահովելու նպատակով օժտված լինեն CPU՝ ցանկալի է առնվազն՝ Core i7, RAM՝ ցանկալի է առնվազն 16 GB, GPU՝ ցանկալի է առնվազն և GTX 1050 ցանկալի հզորություններով: Նկարահանման գործընթացի անխափան և անընդհատ անցկացման նպատակով անհրաժեշտ է, որ առկա լինեն տեսանկարահանման, հոսանքի և ձայնային անհրաժեշտ մալուխներ և տեխնիկայի սնուցման մարտկոցներ, նվազագույն տեխնիկական ապահովում:

- Նկարահանում

Առավել արդյունավետ կազմակերպելու համար նկարահանումները և ցանկալի վերջնարդյունքին հասնելու համար, ցանկալի է, որ նկարահանումային օրերի քանակը կազմի շուրջ 2, յուրաքանչյուր նկարահանումային օրվա տևողությունը կազմի շուրջ 8 ժամ, իսկ մոնտաժային ժամերը՝ 100 ժամ: Նյութը դինամիկ և դիտվող դարձնելու նպատակով, ցանկալի է օգտագործվող անիմացիաների գումարային տևողություն տեսադասախոսության ընթացքում կազմի շուրջ 1 րոպե: Տեխնիկական անձնակազմի տեսանկյունից, ցանկալի է ներգրավել օպերատոր, ասիստենտ, համակարգչային օպերատոր, սցենարիստ, թարգմանիչ, ռեժիսոր, մոնտաժող և այլ համապատասխան մասնագետների:

Բոլոր այն չափորոշիչները, որոնց համար սահմանված է «ցանկալի» արտահայտությունը, համարվում են նվազագույն:

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.07.25 12:20:23 AMST

_____

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ԱՁ Սերգեյ Հայրապետյան
Հասցե՝ ք.Գյումրի, Ջիվանու 15
Հեռախոսահամար՝ 093 28 80 88
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/հ՝ 2050132031091001
ՀՎՀՀ՝ 57278776
Էլ. հասցեն՝ sergeyshhayrapetyan@gmail.com
ԱՁ Ս.Հայրապետյան

HAYRAPETYAN SERGEY 1702850110
Подписано цифровой подписью: HAYRAPETYAN SERGEY 1702850110
Дата: 2019.07.24 18:29:35 +05'00'

_____

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2019/11-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
9	92121110	Նկարահանման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	100%	100%	100%	100%	100%

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով՝ ըստ մատուցված ծառայությունների ծավալների:*

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 2
Հեռախոսահամար՝ 060 621 000
Բանկ՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 11500166513800
ՀՎՀՀ՝ 01503448
Ռեկտոր՝ Ա.Մուրադյան

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.07.25 12:20:37 AMST

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ԱՁ Սերգեյ Հայրապետյան
Հասցե՝ ք.Գյումրի, Ջիվանու 15
Հեռախոսահամար՝ 093 28 80 88
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/հ՝ 2050132031091001
ՀՎՀՀ՝ 57278776
Էլ. հասցեն՝ sergeyshhayrapetyan@gmail.com
ԱՁ Ս.Հայրապետյան

HAYRAPETYAN SERGEY 1702850110
Подписано цифровой подписью: HAYRAPETYAN SERGEY 1702850110
Дата: 2019.07.24 18:29:56 +05'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2019/11-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
պաշտոնը, անունը	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

HAYRAPETYAN SERGEY 1702850110
Подписано цифровой подписью: HAYRAPETYAN SERGEY 1702850110
Дата: 2019.07.24 18:31:16 +05'00'

Հավելված N 3.1
« » 20 թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2019/11-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

HAYRAPETYAN SERGEY 1702850110
Подписано цифровой подписью: HAYRAPETYAN SERGEY 1702850110
Дата: 2019.07.24 13:11:02 +05'00'

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն